

Բնապահպանական քաղաքականություն

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը պարտավորվում է իր ողջ գործունեությունն իրականացնել՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և բնապահպանական հետևանքները: Ընկերությունը գտնում է, որ շրջակա միջավայրը յուրաքանչյուրիս պատասխանատվությունն է, և բոլոր աշխատակիցները պատասխանատու են բնապահպանական առումով կայուն գործունեության համար:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը բնապահպանական իր չափանիշներին համապատասխանելու գործում ձգտում է հասնել կայուն բարելավման՝ մինչև ժամանակ աշխատելով նվազեցնել տեղական և գլոբալ միջավայրի վրա իր ունեցած բացասական ազդեցությունը՝ ընկերության գործունեության ընդլայնմանը զուգընթաց: Այս նպատակներին հասնելու համար Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը՝

- Գործունեությունն իրականացնում է համապատասխան բոլոր օրենքներին և կանոնակարգերին համահունչ և կիրառում է իր ներքին բարձր բնապահպանական չափանիշները:
- Իրականացնում և հավաստագրում է շրջակա միջավայրի կառավարման միջազգայնորեն ճանաչված ISO 14001 համակարգը իր գործունեության բոլոր ոլորտներում՝ ապահովելու հաշվետվողականությունը և շարունակական կատարելագործումը:
- Բնապահպանական ռազմավարության ուղղությունները և նպատակները ներառում է իր բիզնես պլանավորման գործընթացում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության կարգավորումը իր գործողությունների անբաժանելի մասը դարձնելու նպատակով:

- Տարորոշում է բնապահպանական մոտեցումները, սահմանում է բնապահպանական նպատակներ, վերահսկում է արդյունքները և աուդիտի ենթարկում գործընթացները՝ գնահատելու իր գործունեությունը ներքին և արտաքին բնապահպանական չափանիշներին համապատասխան:
- Տարորոշում և կիրառում է ուղիներ՝ բարձրացնելու ընկերության կողմից նյութերի և ռեսուրսների օգտագործման, աղտոտվածության կանխարգելման, արտանետումների նվազեցման և աղբի վերամշակման արդյունավետությունը:
- Պարտավորվում է պահպանել ջրբաժան ռեսուրսները՝ խնայելով ջուրը և մաքրելով կեղտաջրերը:
- Պարտավորվում է պաշտպանել կլիման՝ նվազեցնելով էներգիայի օգտագործումն և սառեցնող նյութերի արտանետումները:
- Առաջատար դեր է խաղում ըմպելիքների արտադրության ոլորտում էկոլոգիապես կայուն փաթեթավորումը խթանելու գործում՝ թեթև քաշի, ըմպելիքի փաթեթավորման վերամշակման և իր փաթեթավորման մեջ վերամշակված նյութերի օգտագործման միջոցով:
- Քաջալերում է իր աշխատակիցներին բացահայտել և օգտագործել բոլոր հնարավորությունները՝ բարելավելու բնապահպանական ցուցանիշները և թափոնների կառավարումը սեփական աշխատանքային տարածքում:
- Համագործակցում է շահառուների հետ բնապահպանական այն խնդիրների լուծման գործում, որոնցում Հնկերությունը կարող է ունենալ արդյունավետ և տևական ներդրում:
- Տեղեկացնում է շահառուներին իր բնապահպանական պահանջների և գործունեության մասին:

Այս քաղաքականության իրականացման վերահսկման համար պատասխանատու է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեն:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես հավատարիմ եմ Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության Բնապահպանական քաղաքականությանը:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն